



REV. FR. UNTZAG NALBANDIAN
ARMENIAN CHURCH OF
THE HOLY ASCENSION

1460 Huntington Turnpike
Trumbull, Conn. 06611
Tel: 203/372/5770

ՍԲ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

Տ. ԸՆԶԱԿ ՔԸՆՑ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, Հոփի

Մարտ 2, 1989

Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին
Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ
Արք. Մանուկեանին Ի նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

1988 -ը թուականը մեր համայնքին համար եղաւ աշխոյժ
ու գործունէութեամբ լի տարի մը: Ունեցանք բազում կրօնական, մշակութային-
դաստիարակչական, ընկերային ու հասութեային ձեռնարկներ:

Մեր զոյգ դպրոցները վերակազմակերպեցինք եւ ամուր
հիմքերու վրայ դրինք: Ներկայիս 16 ուսուցիչներ կը դասաւանդեն 35 պատիկներու:

Դպրաց դասին զօրացումն ու երիտասարդներու դաստիարա-
կութիւնը մտահոգութեանս առարկան են: Այս տարի մասնաւոր եւ յաւելեալ աշխատանք
պիտի թափեմ անոնց ուղղութեամբ:

Անցնող տարուան ընթացքին նախազահած եմ աւելի քան
100 ժողովներու եւ տուած եմ նոյնքան այցելութիւններ ծխականներուս: Կանոնաւոր
կերպով այցելած եմ բոլոր հիւանդներուն, ըլլան անոնք անդամ թէ ոչ:

Ընդհանրապէս զոյ եմ ծխականներէս ու ծխական խորհուրդէս:
Ծխական խորհուրդի անդամներս հասկցող են, միշտ զօրավիգ ու օգտակար ծրագրերուս:

1988 ի ընթացքին կատարեցինք մեր եկեղեցւոյ ներքնա-
սրահին նորոգութիւնն ու ընդլայնումը, որը արժեց շուրջ 38 հազար տոլար:
Գնեցինք նաեւ մեր եկեղեցւոյ կից գտնուող կէս էյբլը հողաշերտը:

Անցնող տարուան ընթացքին կատարած եմ 9 հարսնիք,
8 մկրտութիւն եւ 2 թաղում: Պաշտամունքները կանոնաւորապէս կատարած եմ:
Եկեղեցի յամախողներուն թիւը զգալիօրէն ամած է, նոյնպէս եւ մեր ձեռնարկներուն:

Մեր դպրոցներուն կապերը Առաջնորդարանի կրթական
բաժանմունքներուն հետ սերտացած են ու յամախակի: Անոնք կը մասնակցին նաեւ
տարեկան համագումարներուն՝ Մայիս ամսուն:

Հայաստանի մէջ պատահած Դեկտ. 7 ի երկրաշարժէն վերջ
առ այսօր, համայնքս հաւաքած է ֆ 120.000 ի պատկառելի գումար մը, որուն համար
բոլորն ալ հպարտ են:

Մնամ Թեմիդ ծառայ
Տեմ Գալստ
Ընծակ Քննյ. Նալպանտեան